

ՀԱՆԴԵՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՌԻՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԷՅ ՀՆԴԿԱՅ

ՎԵՆԵՏԿՈՅ ԼՃԱԿԷՆ

(Տես Հտ. Խ, Պր. Դ, էջ 344, Հտ. ԽԱ, Պր. Ա, էջ 63):

Յաւաքի պատահարք:

Կարաւանը ճամբոյ որ ելլելու եղաւ, տեսան որ Սիտի Համէտին ուղտերէն մէկը ուրիշ Սյարաթոց խումբի մը հետ գնացեր էր, որոնք արդէն երկու մօտ հեռացեր էին իրենցմէ. հարկ եղաւ որ նաւապետը վազէ ետէն ու ետ դարձնէ: Ո՛րչափ ցաւ, որչափ նեղութիւն ու վիշտ չբաշխեց այն հրամանը կատարելու համար: Ուրիշ զգեստ չունէր վրան եթէ ոչ պատառատուն չապիկ մը, գոր իր տէրը տուեր էր իրեն. իսկ միւսները՝ մէկը առաջաստի, մըկտորով ինքզինքը ծածկած էր, ուրիշ մը կարճ զգեստ մը գտնելու բարեբաղդութիւնը ունեցեր էր. իսկ միւսները այծու մորթերով իրենց զգեստ չինած էին: Այսպիսի խղճալի կերպարանք սկսան ուրիշն անապատին կիզիչ միայնութիւնները կրտրել: Միւտ մի ե նոյն մակերեւոյթը, մի ե նոյն տափարակ գետինն էր որու վրայ կը քալէին, ե միայն մերթ ընդ մերթ ժայռերու ծայրեր գուրս ցցուելով միակերպութիւնը կ'ընդհատէին: Ուղտերը մեծաքոյ կը յառաջէին. ե որովհետեւ շարժմունքին սաստիկ ցնցմունք կը պատճառէր, մեր խեղճ հեծնալներուն սրունքները՝ ասպանցակ չունենալուն պատճառաւ՝ ետեւ առաջ կ'երթային ու կու գային, կենդանեաց կրտնակը շարունակ չիուելով. անով կաշիին բշտելով կ'ելլէր, անանկ որ իրենց դրափոյն ու սրունքի մներն ալ ոսկորներուն վրայ հաստատուն մնալ չէին կրնար. ամեն ցնց. մունքին կարծես ոսկորնին մէկմէկէ բաժնուիլ կ'ուզէին: Չուրը բաղորովին նուազած ըլլալով, ալ ուրիշ բմակիք չկար եթէ ոչ իրենց ե ուղտերուն մէջը: Շատ մը օր

այսպէս յաւանդատարար երթալէն ետք՝ հասան ձեզքեալ ժողովի մը քով, որ ծառօթ էր Սիտի Համէտին. հոն յատակ ու զով ջրի աղբիւր մը գտան: Ո՛հ, ինչպէս ոչինչ բան մըն ալ զմարդ կենաց սիրոյն կը կապէ: Այն զովացուցիչ տարրը իրենց հոգի տուաւ. որմէն փոքր պաշար մը հեւ տներին առնելով քիչ մը ետքը հեռացան ու ճամբանին գէպ 'ի արևելք շարունակեցին:

Քառասուն փարսափ միակերպ երթալէն յետոյ, ուրիշ Սյարաթոց խումբի մը պատահեցան, ե անոնց հետ միանալով ճամբանին շարունակեցին: Այս ետքին ներս խումբ մը յիսունի չափ ոչխար հետերին ունէին, բայց ամենը անանկ վատուէ ու տկար՝ որ ուզի վրայ հագիւ կրտնային կենալ: Սիտի Համէտ այն ոչխարներէն մէկը գնաց ու նաւապետին ձեռքը տալով հրամայեց մինչև առաջիկայ օթի վաշը տանիլ. այս օթեանը բաւական հեռու էր, բայց հոն ջրհոր մը կար, որու քով ոչխարը մարթեցին: Չուր խմելէն ե երկու տիկ ալ լեցնելէն յետոյ, երկրորդ օրը ճամբայ ինկան ու գրեթէ երեսունուհինգ փարսափ տեղ քալեցին: Իրիկուան գէմ, Սիտի Համէտ ոչխարին աղիքները առաւ, ու նաւապետին ե իր ընկերներուն առաւ. անոնք ալ առնելով կրակին վրայ խորովեցին ու կերան: Թէպէտ ե շնչին ե սգորմենի կերակուր մըն էր այն, խեղճերը մեծապէս կարօտ էին քիչ մը ուժովնալու համար. որովհետեւ յաջորդ օրը հարկ եղաւ ողջն անապատը կտրել երթալ, որ այնուհետեւ ընդարձակ առաջունը մը կը փոխուէր: Այն նոր ստպարիցին մէջ աւագրդ դէպ գէպ հաւաքուած էր, անանկ որ ամեն քայլին մինչև 'ի ծունկս կ'ընկղմէին: Ե որովհետեւ սաստիկ կիզիչ էր՝ հարկ եղաւ

որ ամենը ուղտերուն վրայ հեծնան. և այն պէս յառաջելով քիչ մը ետքը զարհուրելի երկրի մը մէջ պաշարեալ գտնուեցան: Կուրոր ու ձեան պէս թիթեւ աւազ մը երկու հարիւր օտք բարձրութեամբ լիւսեր կը ձեւացընէր: Այն տարօրինակ լիւսերը չարժուէն և ահաւոր աղբիւրու կը նմանէին, որ անմիջապէս կարծես զիրենք տակը առնուլ ու ծածկել կ'ուզէին: Քամին՝ այն հրուկէզ աւազները փոթորկաբար մրկելով վրանին կը լցնէր ու բոլոր մարմիններն կ'սղբէր: Ուղտերը զծուարաւ կրնային յառաջել. քառած նեղութիւններն անտանելի էր. սաստիկ չարչարանք քաշելէն յետոյ՝ վերջապէս իրկիտան գէմ՝ կարող եղան այն սպառիչ տեղէն դուրս ելլել: Կեր մարգոց մի միայն կազդուրիչ միաթորանք ոչխարին անէն փոքր կտոր մը տրուեցաւ. այնպէս քաղցեալ էին՝ որ միւսը տետելէն յետոյ՝ սուկըններն ալ մանրեցին կերան: Երկրորդ օրը ուղտերը յանկարծական սարսափէ մը բռնուեցան, անանկ որ մեծ գծուարութիւն իրեցին մինչև որ կրցան ծողովել. և այնուհետեւ երկու օր ճամբայ ընելէն յետոյ՝ վերջապէս աւազուտից սահմաններէն դուրս ելան: Այն տեղուանք Արաբացոյ մը հանգիպեցան. որմէն՝ մինչդեռ քուն կ'ըլլար՝ քիչ մը զարի գողցան ու փախան. ստկայն այն արարացիին արթննալով և եղած գոգութիւնը իմանալով՝ յափշտակողաց ետևէն վազեց և անոնց հասնելով ըսաւ. «Դուք հրազէն ունիք ձեռքերիդ և մրտաքիւրիդ դրած էք որ զիս սպաննելը զիրենք բան մըն է. սակայն ևս երկիւղ չունիմ. արդարեւ Սատուա իմ պաշտպանս է. խաղաղութիւն է մէջերնիս, հարցուց:

— Խաղաղութիւն է, պատասխանեց Ախտի Համէտ:

Յետ որոյ երկայն խօսակցելով, Համու գտնեցան ու գարին իրեն նստ գարձուցին. գողն ու գողցուածին տէրը միարան աղօթքներն ըրին, ու յետոյ իրարմէ բաժնուեցան: Երկայն ատեն ընթանալէն յետոյ մինչև մութ գիշեր, այս մեր տխուր ճանապարհորդք քուն ըլլալու կը պատրաստուէին, երբ մերձաւոր տեղէ մը փայտի լուսեցան: Ամենը լուս կեցան ու մտիկ ըրին. յետոյ խիստ դարուվոր տեղ մը գտնելով ժայռուտի մը քով գգուլութեամբ անկէ վար ինջան գէպ՝ ի տեսակ մը հովիտ, որու ծայրը մէկ քանի թուփեր գտան. հոն իրենց ուղտերը թողուցին որ այն ցամաքած ճիւղերը ծամեն: Տէրերը զէնքերնին պատրաստեցին, ու յետոյ այն հովտին մէջ ցիրուցան գտնուող աւազուտ բարձրաւանդակները ելան. մեր գիրեններն ալ անոնց հե-

տնեցան, և ծունկ ու ձեռք ի կիր առնելով նոյն բարձրաւանդակներուն վրայ մագլցելու ելան: Մօտ դաշտը երբ հասան, Արարացիք սկսան գազաններու պէս ոռնալով կանչել, այնպէս որ մարդու վրայ վախ կը բերէին. մերթ վազերց ծայնը կը հանէին, մերթ առիւթներու մոնչիւնը, մերթ ալ կարծես քաղցած գայլեր էին: Այս աղաղակներէն հտըը սկսան բնտուկ այն մարդիկը՝ որոնց ծայնը տկանջներն զարկած էր: Բայց բոլոր իրենց խոյզ ու խնդիրը նոյն եղաւ. և վերջապէս փոքր անկիւն մը գտած ըլլալով գիշերը անցընելու պատշաճ, նորէն նոյն ահռելի ծայները հանեցին և լռելով ամենը քուն մտան:

Որն որ լուսցաւ օտար ուղտեր տեսան. անոնց հանդիպումը այս օգուտն ունեցաւ որ մեր գրերները փորձ առին թէ մարգասիւրութիւնը բոլորովին օտար բան չէր այն բարբարոս երկրին մէջ. Վասն զի մինչդեռ կը պատրաստուէին ճամբայ ելլելու, պատահաւ կին մը իրենց մօտենալով հարցուց, թէ արդեօք տէրերնին ալ իրենց պէս առնթի էին. և իրենց հաստատողական պատասխանին վրայ կինը փութաց տղայ մը, որ հետը եկած էր, տեղ մը զրկելու: Քիչ մը ետքը տղան դարձաւ, ոչխարի մը կամ այծու խաչած կտորներ բերելով, Բայց աւաղ. բոլոր այն մնացորդքն կենդանույն ու կորները և աղիքներն էին: Տէրերը խկոյն աղիքները լափեցին կերան. իսկ ոսկորները թողուցին գերիներուն, զորոնք աղէկ մը կրծկէն յետոյ՝ ակուաններուն տակը մանրեցին կերան: Այն ողորմած կինը իր գութու աւելի ընդարձակելով՝ չափ մըն ալ ջուր տուաւ իրենց թթուած կաթով խառն, որ իրենց սքանչելի ըմպելիք մը երեցաւ:

Վաղուան օրը նոյն գարին մարդը դարձաւ եկաւ իրենց. վասն զի անդրադարձներ էր որ Ախտի Համէտ բաց ի գարիէն նստ տախտի ու գողցել էր իրմէն. ինչպէս նաև մէկ քանի փոքր գաւազաններ, որոց մէջ լեցուցած էր ոսկիի փոշի, ծխախոտ և տեսակ մը խոտի արմատներ, որ աչքիւն լուս և կախարդութեան դէմ մէկ հատիկ զեղ կը համարուի: Արարացիք այս արմատը շատ կը յարգեն. այծու մը սրունից կամ զօտին ոսկորի մը միջոցաւ անոր ծուխը կը քաշեն, և այնուհետեւ իրենք պիւրնք անխոցելի կը համարին:

Քանի մը օր ետքը ուղտերու, ոչխարներու և այծերու մեծ խումբ մը առջևներն ելաւ. անոնց տէրերը իրենց մեծ ընդունեւութիւն ըրին: Ախտի Համէտ ուլ մը գնեց և անոր աղիքները մեր թշուառներուն տրուաւ, որոնք՝ հում և առանց լուսալու՝ խկոյն

կերան տնէնտացոյցին. այնպէս բուռն էր իրենց անօթութիւնը: Այն Սրաբաղցիք անդէրդը՝ գիւղերանց զնաւապետը արթնցնելով մեծ սկաւառակ մը տուին ձեռքը լի տեւ, սակ մը բուտինկայով. այն ուսակէք գրեթէ հինգ լիտր կը կշէր, թող որ վրան առատ կտթ լեցուցած էր: Ինչ աղինն ընչայն երեցան այն խղճներուն, և ինչպէս տխրութիւն և առատաբար կերան ամենը. մէկզմէկ մեղադրելով որիրամով կը կանչէին: Ահաւորապէս քաղցած էին. վատտեժ, ցած ու ցամբած՝ ալ կաշի և ոսկոր դարձիր էին:

Իրեք չորս օր անոնց ջրի և առանց կերակրոյ վազելէն յետոյ՝ ուղտերէն մէկը կորուսին, որ չարաշար աշխատութիւնէ սատկեցաւ: Ամեն ուժաթափ և բեալ՝ հաղի կրնային իրենք զիրենք քաշուտել. ոչ միայն մեր այս խեղճ գերիները, այլ նաև իրենց Սրաբաղի տէրերն իսկ: Եւ մինչդեռ այս յուսահատական վիճակիս մէջ էին, յանկարծ մարդու մը ու կնկան մը պատահեցան, որ հետերին քանի մը այծ ունէին: Սակայն անոնց ձեռքէն քան առնել անկարելի էր. մինչև հարկ եղաւ մահ սպառնալ կնկան որ համոզուի իրենց հինգ այծ ծախելու: Այս գէպքէս ետքը վերջապէս հեռուանց ծովը տեսան. այն տեսարանը իրենց սիրտը յուսով լեցուց, ու երևանին քիչ մը ժպիտ եկաւ. այծու մսէն ալ մէկ քանի կորոր ուտելով քիչ մը մեծովցան և որդեգրան: Սակայն իրենցմէ մէկը կարծես թէ ալ ապրանաց չէր. շարունակ բերնէն արիւն կուտար: Ծամրանին շարունակելով չորս Արաբացի բոտանեաց հանդիպեցան, որոց հետ խոսք գրին մէկտեղ ճաշապարհորդելու: Այս խմբին գլխաւորին կինը մարդասիրել ուզելով՝ մեր այս գերիներուն բուտինկայի կտոր մը տուաւ. քիչ մը ետք ալ ծովգերբը հասնելով մէկ քանի մկնականք ժողովուցին, և այնպէս կէս մը ստանցմով և կէս մը այծու մսով քանի մը օր կերակրուեցան: Մէկ օր մըն ալ, սաստիկ ընթացքէ մը ետքը, մինչդեռ երկընթէն կարծես կրակ կը թափէր, այն հիւանդոտ մէկն ալ յոգնութիւնէ չնչապաւառ՝ անդգայ գետինը ինկաւ: Անդու Սրաբաղիները սկսան գաւազանով անխնայ զարնել անոր որ ոտք ելլէ: Այս տեսնելով նաւապետը՝ շուտ մը ուղղուն վար սահեցաւ և անոր օգնութիւնս վազցին: Մէկտեղ, խոտի Համէտին եղբայրը, անգթաբար կը չարուհաւէր գաւազանով հարուածել՝ այն առերեւոյթ անկենդան մարմինը, որ անդգայ գետինը փռուած էր: Ուրիշ Արաբացի մըն ալ մէկ ձեռքով մորուքէն բռնելով միւս

ձեռքով սուր րը վերուցած անմիջապէս գլուխը կտրել կ'ուզէր: Դաւապետը առանց ժամանակ կորսնցնելու մէջը նետուեցաւ, հրեք մէկդի այն արարացին, և այն անդգայ գլուխը ձեռքերուն մէջ առնելով գետնէն քիչ մը վեր վերուց ու քիչ մը ջուր ուղեց: Արաբացին կատարձ կ'ուզէր զնաւապետը սպաննել. սակայն խոտի Համէտ վրայ հասաւ ու զինքն արգիւթց. թէպէտ և նաւապետը այն խղճը աղատելու համար ամեն վտանգ զիմադրաւելու պատրաստ էր: Բոլոր այն Արաբացիք մտքներին դրած էին թէ այն նաւապետին տկարութիւնը յամուսնութենէ առաջ կու գար, իրը թէ միտքը դրած բլլար անով կարաւանին ընթացքը ծանրացնելու. բայց նաւապետն ամեն ջանք բանցնելով կրցաւ համոզել զխոտի Համէտ որ այն հրահրին տկարութիւնը սաստիկ խռնութիւնէ առաջ կու գար: խոտի Համէտ այն ատեն ուղտ մը մօտեցնել տուաւ, և խեղճ նաւապետին քիչ մը ջուր խմցնելով անմիջապէս զգաստացուց: Երբ խոտի Համէտ անոր աչքերուն բացտիլը տեսաւ, որ րախութիւնէն լացը չկրցաւ բռնել. և անմիջապէս Քլարքին քովը գետնիցնել առաւ կանչեց. « Անգղիացիք անշահ մարդիկ են. կնկան ու տղու պէս քայլել պատեն միայն »: Դաւապետը տհաճելով գատտախանց թէ ինքը շատ տղէկ կրնար քայլել: Եւ այս յօժարութեան ցոյցէն անորմէն լով, « Դատ աղէկ, պատասխանեց Արաբացին, որ ընտանիքդ միւսանգամ պիտոր տեսնաս »:

Հոկտեմբերի տոմարեօթին առաւօտը կոտորակիկ ճամբայ ինկան. քալած երկրորդին անոյը դարուվար մըն էր. յանկարծ հեռուանց բարձր լեռնին տեսան, որոյ հարեւոյթէն հասկցան որ այն ահաւոր անհուն անապատէն ալ գուրս ելած էին: Իրենց սիրտը կրկին արկացաւ երբ գետին մը քովը հասան, որու ետեւը բարձր խոտեր կային բուսած: Այս գետն գրեթէ երեսուն ոտք լայն էր, ու երկու խոր: Անոր մօտ եղած առուակի մը մէջ խոշոր մկներ տեսան որ ջրին երեսը կը խողային: Արաբացիք փոյթ շտարին այն մկներէն որսուլու. կարծես արհամարհ կը համարէին: Երկրորդ օրը իրկուան գէժ սկսան մշակելու երկիրներ տեսնալ ու գաշտի մը մէջ գարւոր յարգի դէպ մը: Սակայն նոյն օրը այժու մըն ինկալ մնացողներէն զգաւ որիւր տեսնու բան չունեցան. անոնք ալ չորս օրէ ՚ի վեր ուղտի մը վրայէն կախուած էին: Եւ սակայն կարօտութիւնն անանկ էր որ այս ապակաւնեալ անան ալ իրենց ամենաքաղցր կերակուր մը երեցաւ. գիշերն ալ հանգիստ ան-

ցուցին՝ յարդի վրայ պառկելով: Այնչափ երկայն տառն չարունակ բանադատուած ըլլալով իրենց խանջ ու վիրալից յարմարութեամբ պատին ծալուտ տներուն, և կամ անոր կիցիչ աւազուտներուն վրայ հանգչիլ, հիմայ այս յարգը իրենց փեսայից անկողնոյ անուշութիւնը կու տար:

Հոկտեմբերի տասնութներին իրենց աշաց ներկայացան վրաններ, ջուր, կովեր, էշեր, ոչխարներ, կանաչ խոտ, ծաղիկներ ու բազմաթիւ արմաւենիներ: Անանկ ան-

ակնիւլ տեսարանի իրենցմէ ոչ ոք կր ուզուէր. ուստի և երախտագիտութեամբ իրենց սիրտը առ Ստաուած վերուցին: Իրենց բզ-գացած յետին աստիճանի ուրախութիւնը զիրենք վերջի աստիճանի տալու թեան մէջ ձգեց: Առուակին եզերքը հասնելով՝ գլուխ նին ջրին մէջ խոթեցին՝ և այնչափ խմեցին մինչև յագեցան: Այս առուակիս տանունն էր Նուն: Յետոյ արմաւենիներուն շքին մէջ տարածուելով հանգչեցան: Սիտի համէտ գնաց հիւզէ մը չորս լիտր մեղր



Պրինտիգի: (Տկս Հտ. Խ, Պր. Գ, էջ 346):



Տուն Վիրգիլիոսի ի Պրինտիգի: (Տկս. Հտ. Խ, Պր. Գ, էջ 347):

գնեց ու բերելով անոնց հետ մէկտեղ բաժին բրաւ: Իրիկուան դէմ տեսակ մը բաւական տուին իրենց, և երկրորդ օրը տասներութ մղոն քաղըլէն յետոյ, գերեզմաննոցի մը քով պառկեցան:

Նոյն ամսուն քսանին ճամբանին շարունակելով հանդիպեցան Մարիտանացոյ ոց և Արաբացոց խումբերու, որոնք ուղտեր և րնտիր ձիեր ունէին հետերին: այս յետին ներուտ վրայ հեծեալ գեղեցիկ գէնըրով գինեալ: Երբայեցոյ մը իսկ հանդիպեցան որ ի Մօկատոր կ'երթար, և իրենց

ըսաւ թէ բոլոր հիւպատոսաց անունները գիտէր. այս ետրինէս իմացան Սնգզիոյ հիւպատոսին անունը. զոր լսելով նաւապետը կտունցեց թէ իր բարեկամն է. թէպէտ և ստոյգն ըսելով և ոչ իսկ կը ճանչնար զինքը: Նոյն օրը իրենց մի միայն կերակուր արուեցաւ. քիչ մը մեղր:


Երկրորդ օրը վրանաբնակ Արաբացոց օթեան մը հասան, ուր զթաւ սրտբու հանդիպելով ջուր և քիչ մը արմաւ ձեռք բերին. յետոյ այս տեղս ալ թողլով, յաջորդ օրը վրանի մը տակ պառկելու բա-

բերողդուծիւնն ունեցան, յետ քանի մը ձկնակտնջ ու տեղէն, զորոնք ծովեղերքէն ժողոված էին: Որպէս թէ կրածինն բաւա- կան չըլլար՝ հոկտեմբերի քսանուերկուքին զողեր յորձկեցան վրանին. սակայն արիւն- նալով՝ յաջողեցան անոնց սիրտը վախ ձգե- լու, և այնպէս անվտանգ ճամբանին շարու- նակեցին: Սխիւ Համէտ յաջորդ օրը չորս մեծ ձուկ գնեց և իրենց տուաւ. որոնք կը- տոր կտոր խորովեցին ու մեծ ուրախու- թեամբ կերան: Այնուհետեւ կեանքը կը

սկսէր իրենց քողցրանալ, որովհետեւ հետ- զհետէ, և զրեթէ ամեն քայլին, ջրամբարք՝ և այլ և այլ կենդանաց խումբ՝ առջևնին կ'ելլէին: Կը սկսէին տարապահ քաղաքա- կրթութեան նշանները տեսնել. կանանց խումբ մշակութեան գրաղանաց ու շաղիւր- այլք դարձելու տղաքնին կոնակնին տուած՝ այլ և այլ ուղղութեամբ կ'երթեկէին: Ա- նոնց սկսան յաջորդել պարտիզապատ գիւ- ղեր, որոնց ցանկապատք փշենիք էին: Բայց հանգերձ այս բնակարանաց մերձաւորու-



Դղեակ Ի Պրինտիգի: (Տես Հտ. Խ, Պր. Դ, էջ 347):



Թուշող ձուկն: (Տես Հտ. ԽԱ, Պր. Ա, էջ 63):

Թեամբը՝ գործնալ աղէկ պինեալ ձիւտոր ոտպատուներ վրանին յարձրկեցան. սա- կայն Սխիւ Համէտին արիւթեամբ յա- ջողեցան կուէն անվտան ելլել և վերջա- պէս վրանորմակ Արաքացիներու օթեան մը համեմելով զազարեցան գիւղերը անցընե- լու: Այն հիւրասէր Սրբապետ մարդասի- բելով՝ քիչ մը չոր ձկնակտնջ և բուտինկա բնձայեցին իրենց: Մինչև այն ժամանակ ճամբան ամենևին հիւանդութեան մը նշան չէին տեսած, և ոչ ինչ և իյէ խօթութեան հետք. բայց մշակեալ երկիրներ հասածնուն պէս հիւանդաց բազմութիւն սկսան տես- նալ. ամանց սրունքները ուռած էին, այլք բո- րատութենէ կը նեղուէին, և այլք գործնալ

ուրիշ սուր ցուէրէ կը շարշարուէին: Այս ախտածէտք մեր գերիները տեսնելով, չեմ գիտեր ինչէն գրգռեալ, բժիշկ կարծեցին, ուստի ամեն կողմէն սկսան վազել իրենց հիւանդութեանց պեղ ուղելու: Կնիկ մը լանջաց վրայ ուռեցք մը ունէր. նաւապե- տը հրամայեց որ ձեռած գարուց սպեղանի մը չինէ ու վրան գնէ. զորն որ քանի մը անգամ կրկնելով վերջապէս ուռեցքը ան- ցաւ: Եւ կնիք իր երախտագիտութիւնը ցուցնելու համար, բուր ու բուռ մը ձկնա- կանջ բերաւ նաւապետին ընծայ տուաւ: Նորէն ճամբայ ելլալով իրենց ընթացքը շարունակեցին, և կէսօրուընէ ետքը, ի հե- առուտ, ծովուն եղերքը, բարձր բլուր մը

տեսան, Սիրի Համէտ մտտնալով նաւապետին ըստաւ. « Ահաւարիկ Մոկտատոր »:

— Փառնի՛ օրուան մէջ կրնանք հոն հասնել, հարցոյց նաւապետը:

— Տասն օրուան մէջ, պատասխանեց Սիրի Համէտ:

Սահայն այն տառն օրն անշնորհաբար օրեր երևնալու էին այն խեղճերուն, Յանկորտ սաստիկ կոխ մը ծագեց Սիրի Համէտին և իր եղբօր մէջ, անանկ որ մէկզմէկ սպաննել կ'օղբէին. սահայն Սիրի Համէտ ինքզինքը զուպեց և այսպէս այն ծախտորով թիւր տեղի շունեցաւ: Այն կռուին մէջ քիչ մնաց որ սպաննուէր գերիններն մէկը, զոր նաւապետը որդւոյ պէս կը սիրէր. հարկ եղաւ որ նաւապետը բոլոր իր արիւթիւնը 'ի կիր առնու գինքը փրկելու համար: Այսպէս այն փոթորիկն ալ անցնելով ճամբան կարունակեցին ու գիւղ մը հասան, ուր պատկառելի կերպարանք ծերուկ մը գիրնքը հիւրընկալեց: Շուտ մը փութաց խաշած գարի պատրաստեց և առջևնին դրաւ որ ուտեն. այնպէս ալ առատութեամբ աղւաւ, որ առջի անգամն էր որ իրենց ուղարկէն աւելի ուտելիք կը գտնէին: Եւ որովհետեւ սաստիկ անօթութիւն կը զգային, լիովին լեցուցին իրենց ստամոքսը. որչափ ալ կը քանային իրենք գիրնքը բռնել որ շախաղանց շուտն, ճար չեղաւ. մինչև յետին հատիկն անգամ լավեցին կերան: Կծրագորարար այս առատ կերակուր իրենց սաստիկ ցաւ պատճառեց: Երկրորդ օրը նմանապէս կարուանն ուրիշ գիւղ մը հասնելով՝ աղէկ ընդունելութիւն գտաւ Մոհամէտ տնունով մէկը մը տունը: Իրիկուան պէմ Սիրի Համէտ պնտաւապետն իրեն կանչելով ըստաւ, թէ վաղը, ինքը Համէտ և իրենց հիւրընկալ տանտէրն առանձին 'ի Մոկտատոր երթալու էին. և թէ հոն հասնելու համար՝ գիրքը ցորկի ջրովով ճախապարհորդելով իրենք որ պէտք էր. ուստի իրենց նախընթաց պայմանին համեմատ պէր գրելու էր իր բարեկամին:

— « Եթէ բարեկամդ քեզի ու թու մարդոցը համար միւր գաղափարով դրամով հաւուցանէ, ըստաւ, աղաւ կ'ըլլաք. քայց եթէ գիտ խաբեր ես, գիտնաս որ գրեզ պիտոր սպաննեմ և ընկերներդ իրբ գերի պիտոր ծախուին. Քեզի բարեք ընելու համար ինչ որ ունէի ծախեցի. անօթութիւն, ծարու, յոգնածութիւն, տնեսայն նեղութիւն քանցի. մինչև կոխ ալ ըրի գրեզ ընտանեացը հասցընելու համար: Այսչափ բան քաշած ըլլալուս համար չեմ ցաւիր, որովհետեւ խօսքիդ կը հաւատամ և համոզուած եմ որ Աստուած հետդ է և Հիմա գուք ամենքդ

հոս մնալու էք. կերակրոյ համար մի փոքր ընէք. յանձնած եմ որ ուղածնուգ չափ հաց ու բուտնիկա արօտի ձեզի: Քնա հիմա պառկէ »:

Երկրորդ օրը առաւօտը կանուխեկ Սիրի Համէտ զննապետը նորէն կանչելով ըստաւ. « Ելորդ նամակդ գրէ »: Խեղճ նաւապետը մեծ ահուգովով նստաւ ու հետեւալ նամակը գրեց:

Պարոն,

Քոմերս տնուամբ նաւը՝ ճիպրալդարէն Սմերիկոյ երթալու ճամբայ ելած ըլլալով, օգոստոսի 28ին նաւապետի կիցաւ 'ի Պայատոր հրուանգան, Էս ու նաւապետին էն չորս հոգի, գրեթէ մերկ հոս տեղս բարբարոսաց ձեռքը գերի կը գտնու ինք: Կ'աղաչեմ, միջնորդ ունելով այն յօղը որ զմարդ մարդու կը կապէ, և այն եւրոպական արիւնը որ երկարացք մէջ էր քալէ, ըլլա՛ւ աշխարհքիս վրայ ունեցած ամենէն սիրելի անձինքներուդ համար, մեկ ազատելու համար կանխելով շնորհէ ասոնց պաշանջած ստակը, որ է 920 գահիկան, և երկու կըրկնակ հրացան: Աղատութիւնս գտածիս պէս ինչ և իցէ գումար ալ ըլլայ, կարող եմ հատուցանելու, Լոնդոնայու սեղանաւորաց վրայ փոխանակագիր բնելով: Եթէ գիտ չաւ գտան, անմիջապէս գիտ պիտոր սպաննեն, թողլով կինն և հինգ զուտակս որ անմիջապէս վրաս սուգ բռնեն: Բաց 'ի այս հինգ ընկերներէս որ հոս հետս են, գիտ ես ուրիշ վեց նաւաստի իմ մարդիկներէս գերի մնացած են անապատին մէջ: Սիրի Համէտ, իմ արդի տէրս, այս թուրք ձեռքը յանձնելով պիտոր պօրքէ թէ ուր աղդ կը գտնուինք հիմա: Ստոյգը վիսկիլու եմ որ մեզի շատ բարեբարութիւն ըրաւ: Բոլորովին կոպի սակր գործած, մերկ կողպաւուտ ու գերի, քու գրութիւնդ կը պաղաւտիմ, և կը յոսամմ որ իմ թշուառութիւնս սիրող կը շարժէ: Աստուծոյ սիրոյն համար, մեզի թարգման մը ու պաշապան մը գրկէ: Գաղգիարէն և նաեւ սպանիադի լեզուով ալ կը խօսիմ:

ՃԻՄՍԵՆ:

Մինչդեռ գրելու հետ էր, Արաբացիք ուրիշ աղաղու թղթի կտոր մըն ալ ճարեցին, և իրեն բերելով կարող եղաւ իւր նամակը լրացնելու: Իսկ հասցէն ապահովեցընելու համար ուղղեց զայն առ հիւսիս-տոս Գաղղիոյ, Սնդգիոյ, Սպանիոյ, Ամերիկոյ, և կամ ինչ և իցէ քրիստոնեայ վա-

ճառականի որ ՚ի Մօկատոր գտնուի։ Այն թուղթը Սիտի Համէտ առնելով՝ ջորի հեծաւ ու մեկնեցաւ։

Սիտի Համէտին հետանալովը պահապանները սկսան վրանին անգթանալ։ Եթե որ աղտոտ բակի մը մէջ գտնուի փափկին առանց կարեւոր կերպիւրսն անգամ իրենց տալու։ Եւ ինչպէս թէ այսպիսի բաւական չըլլար, յանկարծ այն նկզութեան օրերը ուրիշ մէկ բռնաւոր անձ մըն ալ առպարելչ ելաւ, զոր Արաբացիք Ալի կը կոչէին։ Հզօր կերպարանոր, բուռն ուժով ու բարձրահասակ մէկ մըն էր, որու Արաբացիք յարգութեամբ ու երկնւզի կը նայէին։ Այս Ալին՝ Սիտի Համէտին անորն էր, և կը պահանջէր թէ այս ետքինս իրեն գումար մը ստակ պարտաւրան էր. այն պահանջին զօրութեամբ գերիններուն վրայ ձեռք դնելով՝ իրեն կ'ուզէր գրաւել, որպէս զի իր առնելըը ապահովցնէ։ Այն երկակայելու էր թէ ինչ անտանելի խափան էր որ այն խեղճներուն տղջին կ'ելլէր, մինչպէս իրենց զիրենց փրկութեան գուռը հասած կը համարէին։

Եթեններդ օրը իրիկուան դէմ Ուլլահ Օմար անուանով օտարական մը հասնելով այս թշուառներուն գտնուած բակը մտաւ. բարձրահասակ մէկ մըն էր, օւժով կազմուածքով ու թխագոյն գիւժք. ձեռքը երկայն հրացան մը կը կրէր, գօտին երկուստեքանակ, ու կողմնակի սուր մը և երկուստեք կախած էր։ Այս նորեկն սովորական բարենորոգ տալէն յետոյ՝ նաւապետին մօտեցաւ և ըսաւ որ Մօկատորէն կու գար ուր Սիտի Համէտը տեսնէր էր ողջ առողջ հասած։ Այս այցելութիւնս մեծ ուրախութիւն պատճառեց գերիններուն. որոնց զուրցած ըլլալով որ Սիտի Համէտ չուտով ետ պիտոյր դառնար, մեծ անհամբերութիւն մը մտաւ սրտերին չուտով իրենց տէրը տեսնելու, որովհետեւ իրմէն կախումն ունէր իրենց ապագայ վիճակը. մանաւանդ նաւապետն որու կեանքը, զբրած պրօպաններուն պատճառաւ՝ վտանգի մէջ էր. վասն զի տարակոյս չկար որ եթէ Սիտի Համէտ չգտնար մէկ մի որ ուզենար փրկանքը հաստուցանել, անգթաբար զիրք պիտոր սպաննէր։ Ինչու որ Արաբացիին իր ամեն ունեցածը գոհնէր էր, և նաև նաւապետին խօսքին հատարով իր կեանքը վտանգի մէջ գրած էր։ Երկնւզը այն աստիճանի տիրած էր նաւապետին սրտին՝ մտածելով քաղչի տանջանքները, որ աւելի կը փափաքէր նորէն անապատ գտնուիլ ու տանջուիլ ծարաւով կիզիչ արեւն ու տակ, և անթոթութեան ամենայն կեղեքանք քաշել

քան թէ այն դիրքին մէջ գտնուիլ։ Սակայն հուսկ ուրեմն ինքն իր վրայ եկաւ ու զգաստացաւ. և մտածեց որ ցարչափ միւս ընկերներուն միջակը անստոյգ էր, հարկ էր որ ինքը անոնց փրկութեանը համար ամենայն հնարք բանեցնէր։ Եւ եթէ յաջողէր որ գոնէ մէկ աղատութիւն գտնելով հայրենիքը դառնէր, կ'արեւնար միւսներուն շար կատարածը պատմել։ Սիտի կարօտով կը փափագէր իր տիրոջը պարձին. և սակայն ամեն դրանք բացուելուն սիրտը գոլ կ'ելլէր։

Սիթերդ օրը մթննայուն ժամանակ ձիու տանածայն լսեցին, և անմիջապէս բազին դուռ բացուելով ներս մտաւ Սէյտի Մօհամէտ, որ Սէյտի Համէտին ընկերակցեր էր ՚ի Մօկատոր երթալու, հետը շնորհալից կերպարանքը Մարիտանայի մը ունենալով։ Խօսքը առ նաւապետն ուղղելով՝ անգիտարէն ողջունեց զինքը. նաւապետը իր մայրենի լեզուին ձայնը լսելով այնպէս ուրախութիւն զգաց՝ որ այլալըմբենէն քիչ մնաց վրան մարելիք կու գար։ Մարիտանայցոյն ձեռքէն բռնելով ջերմութեամբ կ'աղաչէր որ խօսի։ Հիւրն առանց յապաղելու զուրցեց իրեն որ Մօկատորէն կու գար, և թէ իր գրած նամակը Անգլիացիին մը ձեռքը ինկած էր որ իրեն բաւական էր, զոր կարողացած ժամանակ չէր կրցած լայք բռնել։ Եւ թէ անմիջապէս հուսուցիւ էր իրկանքը Սէյտի Համէտին, և առանց ժամանակ տալու իրեն, Մարիտանայցոյն, որ իր կնկան իրթայ բարեւ մը տայ, ստիպել էր զինքը անմիջապէս ճամբայ ելել և իրենց գալ։ Եւ ինքը պատուէրը գործադրելով զիչէր ցորկի անընդհատ ճանապարհորդելու էր չուտով քովերին հասնելու։ Այն երկակայելու է այն թշուառներուն ուրախութիւնը, որոնք յանակնկալս մահուանէ ի կեանս կու գային։ Մարիտանայցին փութալով ծոցէն նամակ մը հանեց ու նաւապետին ձեռքը դրաւ. նամակին իմաստն էր այնպէս։

Սիրելի ու թշուառ Պարոն,

Անմիջապէս հիմա Սէյտի Համէտին ձեռքէն ընդունեցաւ ձեր գիրը, որոյ բովանդէսը ձեր խոյր չկայ ըսեմ թէ ինչպէս սրտիս գութը շարժեց։


Ճիպրալդար հրատարակուած օրագրի մը մէջ ձեր նաւուն անունը գտնելով իմացայ թէ էր Ամբրիկացի, և անկէ կը գուշակեմ որ գութ ալ Ամբրիկացի ըլլալու էք։

Նախ ձեզի ուրախակցութիւնս կ'ընեմ անանկ մարդու մը ձեռք ինկած ըլլալուդ,

որ ինչպէս կ'երևայ, ձեր վրայ մեծ գուժ
դգաւցած է։ Ես չեմ կրնար լռել իմ ցաւա-
կցութիւնս ձեր քաղած նեղութիւնները հա-
մար. սակայն միտքարուեցէք, վասն զի Աւ-
տուծոյ շնորհքովը կը յուսամ որ ամենայն
ձեր թշուառութիւնք շուտով կը լինենան։
Կը մաղթեմ որ Աստուած ձեզ և ձեր ըն-
կերեներուն շնորհէ ատողջութիւն և ուժ,
որպէս զի ամենքդ կարող ըլլաք ձեր հայ-
րենի երկիրը անսնելու։

Այս նամակս ձեռքերնիդ հասցնողն է
Ռէյիս Պէլ Քասիմ. իր վրան ամենայն վաւ-
տահութիւն ունեցէք. ձեր ամենայն պէտքը
մանրամասն գրեցէք ինծի, և ինքը գիրեր-
նիդ ձեռքս կը հասցնէ։

Սէյաի Համէտին խօսք տուած եմ 920
դաշէկան Հատուցանելու անմիջապէս որ
դուք քաղաքս հասնիք, ու զիրքը հոս պա-
տանդ բռնած եմ։ Մեծ հաճութեամբ ձեզի
կ'իմացնեմ որ կրնաք ամենայն սպասու-



Նաւաբեկեալ նաւք։ (Տես Հտ. ԽԱ, Պր. Ա, էջ 66)։



Նաւապետը նաւը մնացողաց նշանացի հրամայեց... (Տես Հտ. ԽԱ, Պր. Ա, էջ 73)։

Թեամբ ճամբայ ելլիլ դէպ 'ի Մօկատար.
սակայն ուժերնիդ խնայութեամբ գործա-
ծեցէք ու ծանր ծանր ճանապարհորդեցէք։
Պէլ Քասիմ կօչիկ ու վերաբիւ պիտոր
բերէ ձեզի, և նմանապէս քիչ մը բերնի
պաշար և բմակիք, որպէս զի անմիջապէս
սկսիք ձեր ազատութեան ճաշակը զգալ։


Հարկ չկայ որ դարձեալ կրկնեմ ձեզի
որչափ ցաւ կը պատճառեն ինծի ձեր ծա-
խորդութիւնքն ու քաղած նեղութիւնները,
եւ այն օրն սը զձեզ ու զձեր ընկերները

տեսնելու գոհութիւնը պիտոր ունենամ,
ինծի համար մեծ հապիխս օր մը պիտոր
ըլլայ. և այլն։


Ալ երեակայելու է թէ ինչ զգացին այն
խեղճերը երբ այն աղնիւ նամակը իրենց
կարդացուեցաւ. այն մարդիկ, կ'ըսեմ, որ
այնպիսի դժբաղդութեամբ վերջի ծայր
նուաստութեան իջնելէն զատ՝ չարժուն
կամիւք դարձած էին, և որոնց վայրկեանէ
վայրկեան անգութ մահ մը կը սպառնար։

Ինչպէս միտքարտթեամբ կը լեցուէր նաւապետին սիրտը խորհրդածելով այն մարդուն խօսքերը՝ որու քիչ մը առաջ և ոչ իսկ աշխարհքիս վրայ գտնուիլը գիտէր. այլ և այլ զգացմունքներով սիրտք կը յուզէր տեսնելով թէ ինչպէս այն մեծանձն և անձանօթ բարեկամն զինքը յանկարծակի ամենայն բարիքներով լցուցեր էր. խրատուելով կը վերականգանանար, ու սիրտը յուսով կը լցուէր թէ միւս անգամ իր ընտանիքը տեսնելու կարող պիտոր ըլլայ:

Եւ իր ընկերն ըն ալ ազատելու պիտոր յաջողի: Այն անակնկալ փրկութեան յոյսը այնպէս լցուց ամենուան սիրտը երախտագիտական զգացմամբ առ նախախնամութիւնն աստուածային, որ ամենքը միարտն զետեղելով ձեռքերնին երկինք վերցուցին ու գոհութիւն մատուցին բարերարին Աստուծոյ որ այնպիսի սքանչելիօք իրենց իրաւագործք էր: Եւ սակայն կարծես թէ գեռ իրենց տանջանաց վերջը չէր հասած:



Ափրիկեցի վայրենիք: (Տես Հտ. ԽԱ, Պր. Ա, էջ 73):



Ամենը մակոյկը նստած՝ առագաստը հովուէն տուին: (Տես Հտ. ԽԱ, Պր. Ա, էջ 73):

Որովհետեւ Շէյխ Ա. ի այն խեղճ գերեացու, որ ամեն ինչ հասկնալով իրենց փրկութիւնը, կատարող կիրք ելաւ Ալեքսի Համէտին գէմ, և ուզեց Մաւրիտանացոյն կամայք հակառակ զնաւապետը իրեն գրաւել: Իսկ Մաւրիտանացին արգելքը հեռացրէնելու զիտաւորութեամբ հնարք մտածեց ու քանայ համոզել զինքն որ նաւապետը նոյն տիտղոսը անիրաւաբար իրեն սեփականած էր, և թէ իրապէս նաւապետ

չէր, այլ նաւարեկած նաւուն խոհակերը: Եւ այնպէս հուսկ ուրիմն կարող և զաւ այն խեղճերը լաւագոյն բնակարանի մը մէջ փոխադրելով տալով հանգչեցնել. և հոն իրենց կողով մը բերաւ ինքն ամենազգի կերակրեցին: Խեղճերը առատաբար վայելեցին նոյն բարիքներէն, բայց որովհետեւ ստամոքսնին տկարացած էր և այն կերակրեցինաց վարժութիւնը կորուսած, բոլոր գիշերը չկրցան աչք գոցել:

Երկրորդ օրը Ռէյխս' նաւապետին խրատ տուաւ որ չայ եփէ, և այնպէս զինքը Այաւ-բացինընտէն ցուցնելով՝ վերջապէս հաւատա-ցուց որ բուն խոհակերն էր և ոչ նաւա-պետը : Դոյն օրը ճամբայ ելան գէպ 'ի Մօկատոր : և Եէյա Սլի, միշտ խորհելով իր ճախարգ մտածութիւնը գործադրելու, չուզեց իրենցմէ բաժնուիլ այլ հետերինն գնաց : Իրիկուան գէմ՝ քաղաքը հասան, ուր և ամենահանգիստ գիշեր մը անցու-ցին : և յաջորգ օրը դարձեալ ճամբայ ելլե-լով սկսան Ստասլիբոնի յառաջդէմ առաջ-քը ելլել : Հոն սաստիկ ցուրտ զգացին : ա-նանկ որ եթէ կօշիկ ու վերարկու տրուած չըլլար իրենց՝ անշուշտ ամենը ցրտէն կը մեռնէին : Իրիկուան գէմ՝ փոքր քաղաք մը հասան : Ժողովուրդը վրանքի խափելով սկսան զիրենք սպառնալիքով նախատել : Բարբերազգաբար սաստիկ անձրև մը բռն-նց, որ հեղեղաբար իջնելով դամենը ցը-րուեց, խաղ ինչպէս թէ ասիկայ բաւական չըլլար, քաղքին զլաւուրդը՝ Սլիին անիրաւ թելադրու : Թնանց ունին մատուցանելով գիրենք բանտարկեց : Անոր վրայ Ռէյխս Պէլ-Քասիրմ ըսաւ նաւապետին : « Պէտք է անմիջապէս ճամբայ ելլեմ որ բաւոր այս բաներս երթամ պատմած ձեր բազատարա-րին : Վեց օրէն միւսանգամ քովերիդ կը գառնամ » : Այս բանս լսելով այն գծրազգ-նեըը յետին աստիճանի յոստահատութեան մէջ ինկան :

Մինչդեռ Մաւրիտանացին ձի հսկծալու վրայ էր, Սէյաի Մոհամէտ, որ ինչպէս ը-սինք, Սէյաի Համէտին հետ 'ի Մօկատոր գնացած էր, ըսաւ իրեն : « Միւրի իպրա-հիմ ու Եէյա Սլի չեն ուզեր որ դու Մօկա-տոր երթաս » : Աւ յետոյ նաւապետին զգառնալով և սնոր արցունքները սնունդ-ով ձեռքէն բռնեց ու ըսաւ : « Հանգիստ ձեզի, մի խռովիր, ես կ'երթամ 'ի Մօկա-տոր ու Ռէյխսէն ու քեզմէ նամակ մը կը տանիմ ձեր ազատարարին : որ եթէ պա-տանդի մը պէտք ունենայ՝ ես կը մնամ : Երկու կանայք ունիմ ու եօթը տղայ : Թող հունձքս, դաշտերս և անդեայքս : շատ ա-ւելի յարմար ես պատանդ կրնամ ըլլալ քան թէ Սէյաի Համէտ : Ինքը ձեր բարեկամն ըլլալով կու գայ գնից կ'ազատէ : Սատուած մեծ է և ողորմած » : Բարբերազգաբար այս ետքինս գեռ ճամբայ չելած խնդիրը լու-ծուեցան : Միւրի իպրահիմ, քաղաքապե-տը, երկու կողմի գաւոր լսելով հետեւեալ վճիռը տուաւ : « Դու Եէյա Սլի, իմ հին բարեկամս ես : դու ալ Ռէյխս կը պահան-ջես թէ իրաւունք ունիս այդ հինգ գերի-նեըը վրայ : երկու կողմանէ ալ աղէկ պատ-

ճառներ կան յիրաւի : Բայց որովհետեւ ես չեմ կրնար վճիռ կտրիլ առանց նոր ապա-ցոյցներ բնտառելու, միտքս հաստատած եմ՝ այս գերիներս հոռ քաղաքս բռնելու մին-չեւ որ պատգամաւոր մը երթայ 'ի Մօկա-տոր ու Սէյաի Համէտը հոս բերէ, այն ա-տեն այս գործս կ'որոշուի » :

Այս վճիռը վրայ նաւապետն և իր ըն-կերները բանտարկուեցան, և երկրորդ օրը Սէյաի Մոհամէտ ուրիշ մէկ մը հետը ըն-կեր առնելով գէպ 'ի Մօկատոր ճամբայ ելան : Ստակայն Ռէյխս ճարտարամիտ մարդ-կան էր և ամին տարգիլքի կը ջանար հնարք մը գտնել : անանկ վարկատուութեամբ չար-ժեցաւ որ վերջապէս քաղաքապետին միտ-քը գարծուց այն ինզնիբուն վրայ գթու-թեամբ խոյնելու : Եւ այնպէս քիչ մը աշուշտ պանտիթիւն գտնելով՝ առատութեամբ կե-րակուր տրուեցաւ իրենց, ինչպէս հա-կիթ, հաւ և ուրիշ ուտելու բաներ : որով այն արգելադրանք, որչափ ալ 'ի սկզբան խիթալի երևցաւ, շատ օգտակար եղաւ ի-րենց առողջութեանը : Վերջապէս Ռէյխս նոր գաշինք մը ընդունել տալու յաջողե-լով, առանց պատգամաւորաց դարձին սպասելու, թողլարուեցաւ այն ազգի խոհ-րին նոյնմիտի չորսին ճամբան շարունա-կելու : Իրիկուան գէմ՝ հասան մերձ 'ի Սան-գա Քրուզ կամ Ագատիր, որու նաւա-հանգիստը սկսաւ պարզիլ իրենց աչացը առջին : Ռէյխս վախճալով Ալիին չար դի-տաւորութենէն՝ չուզեց քաղաքը մտնել : Բայց յետոյ ապա արեւմտքէն ետքը մեծ զգուշութեամբ և իբր գողուքի մասն քա-ղաքը, և շատ մը քաղեկէն յետոյ՝ բաց-օթիկայ գետինը պառկեցան հանգչելու : Ռէ-յիս խնամքով իրենց յանձնեց որ աղէկ պահպանութիւն ընեն, մինչդեռ ինքը Ա-լիին վրայ հակելու կ'երթար : Այն գիշե-րուան մօտ շտապաւ : դարձաւ քովերինն և ըսաւ : « Համապ, ելէք : շուտ բերէք երթանք, և մասնաւորապէս զգուշացէք աղմուկ չհա-նելու : Յիշեցէք որ եթէ արեւուն ծագած ժամանակը ասիկց չորս պարսախ հեռի ըլլաք, ալ ձեր աղատութիւնը ապահով կ'ըլլայ : ապա թէ ոչ նորէն թշուառ գերի պիտի մնաք » :

Այն ազգին վրայ շուտ մը ճամբայ ե-լան և զգուշութեամբ քաղելով առանց մէկ մը արթնցնելու : քաղքէն դուրս ելան : Սանգա Քրուզէն երեք փարսախ հեռու էին երբ յանկարձ ձերու վազելով ծայն մը լսեցին : աչքերին վերցնելով տեսան որ քիչ մը հեռուանց ձիւտորներ կու գային իրենց գէմ : Նաւապետին մտքէն յանկար-ծական մտածութիւն մը ունցնելով իսկոյն

Սէյտի Համէտին անունը կանչեց. և յիշաւ ի Սէյտի Համէտ էր, Սէյտի Մոհամէտին և անոր ընկերոջը հետ։ Որչափ ուրախութիւն պատճառեց գերիներուն այս դէպքս՝ մարդ կրնայ երեսփայլել։ Քիչ էր նաքը Շէյխ Սէյի որ գիրենք հալածելու ելեր էր, վրայ հասաւ. սակայն շատ ուշ էր. այլ իր շար գիտաւորութիւնը գործադրել չէր կրնար։ Ստաւոր տրամբ ըլլալով, ուլ խնդճէր ըրողորովին ազատ էին ու ճամբանին շարունակեցին։

Քանի մը որ ճանապարհորդեցէն ետև վերջապէս երկուստեք թիփաղարդ նեղ ճամբայ մը մտան, և անկէ յելելով շարք մը փոքր շարժուն աւազուտից բլրակներու հասան։ Առաստեան ժամը ութ էր երբ այս բլրակներէն մէկին գագաթը ելան, ուսկից Մօկաատը քաղաքը իրենց աչացը առջին ներկայացաւ։

— «Սիրտ ըրէ, կանչեց Ռէյիս առ նաւապետն, ահաւարիկ Մօկաատը այսցդ առնէն է. և ահա կը տեսնեմ այն նաւը որ քեզ ընտանեակը գիրկը պիտոր տանի։ Աստուծոյ գոհութիւն որ զիս ընտրեց ձեր թուառութեանց ժամանակը կնքելու. ուրախ եմ որ ստանկ սուրբ ծառայութիւն մը մատուցանելու արժանի եղայ։ Դոյն ինքն Աստուած ինձի ալ շնորհէ որ կնիկս ու տղարս ողջ առողջ անանամ»։

Այն աւազուտ գետինի վրայ շատ գծուարութեամբ կը բալէին. սակայն վերջապէս քաղցրին մօտենալով անոր արևմտեան պարբասին քովը գագաթեցան։ Զարին երէն վար ինչպիսի խոտին վրայ նստեցան ու սկսան գիտել այն տեսարանը որ իրենց չորս գին կը պարզէր։ Փոքր առաւել մը աւազին վրայէն հասնելով՝ այն կանաչութեան վայրը կ'ոռոգանէր. նաւահանգստին մէջ ալ նաւակաց բազմութիւն մը ամենայն ուղղութեամբ կ'երթնեկեր. մինչդէռ այլ և այլ ճամբաներու մէջէն բազմութիւն մարդոց և երամբ սուղուց, կովուց, ձիոց և ոչխարաց՝ կը շրջապայէին։ Մինարեից բազմութիւնը քանի միակերպութիւնը կ'ուրելով՝ դէպ ի՛նչ երկինք ջինջ կապուտը կը սլանային։ Սակայն այս ընդհանր տեսարանին մէջէն ամենէն աւելի սրտերին բաբախել տուողը՝ Ամերիկայի դրօշն եղաւ՝ որ տան մը վրայէն կը ծփար։ Ի՛նչ քաղցր ապշութեան պատկեր էր այն խեղճերուն համար։ Գիտ. ևս խոտին վրայ նստած աշուշ Հիպսման մէջ էին, երբ յանկարծ Ռէյիսին ձայնը լսուեցաւ որ կ'ըսէր. «Ահա հոս են»։ Խոկոյն ամենը աչքերին վերուցին, և ահա առջևնին կեցած տեսան իրենց աղաւաղարը։ Այն բարերարը ի՛նչ զգաց-

մամբ յառաջ նետուելով գրկեց զնաւապետը և ըսաւ. «Բարի եկար. այս վայրկեան ինձի երջանկութեան վայրկեան մըն է»։ Սրտին ալալցութիւնը այնչափ էր որ աչքերէն արցունք կը վալէր. միւս նաւապետիսց իւրաքանչիւրին ձեռքը սեղմելով՝ աչքերը երկինք վերուց և ըսաւ. «Տէր Աստուած, քեզի գոհութիւն կու տամ որ այս թշուառներն ողորմութիւնդ հնձի չըրիր։ Եղբարե...»։ Սակայն սիրտը սաստիկ ելած՝ շիրցաւ խօսքը առաջ տանիլ. հեծկրտաւոր ձայնը կտրեց ու բռնեցաւ գետինը նստաւ։ Ամենը իր չորս կողմը շրջած կու լային։ Քիչ մը ետքը զօրանալով ըսաւ. «Հապա, երթանք բարեկամք, քաղաքը մտնենք. տունս ձերն է ու հոն այլք ձեզի կը սպասեն»։ Եւ այնպէս ամենը միաբան քաղաքը մտան և ի՛նչ հանգիստ մարդասէր հիւրասիրութեան։

Նաւապետն և իւր ընկերները, իրենց վշտաց օրերը անանկ անտանելի չորացրանք կրած էին, որ օսկորինն ու կողերինն ոչ միայն միւր կորուսած էին, հապա նաև գրեթէ բոլոր կաշին. անանկ որ անապատը եղած ատենին՝ կրակով ճերմկեցած ոսկորներ կը ընձնէին։ Այլ ի՛նչ Մօկաատը հասնելուն ետքը նորէն սկսան վրայ դնել ու մարմինն նոր կաշիով սկսած ամեղուել. սակայն և այնպէս տեղացիք կամաք կամ ցամքած գերիներ կը կոչէին դանտը։ Նաւապետը ինքզինքը կշտել տալով գտաւ որ հագու ինքնուրոյն լիւր կը կշտէր, մինչդէռ առաջ իր բուն ծանրութիւնն էր երկուհաւորիւր քառասուն լիւր։ Նաւաստիներէն մէկը կար որ ոչ քառասուն լիւր կը կշտէր։ —

Մեր պատմիչը հոս ըմբռնելով իւր սլաւմութիւնը՝ ոտը ելաւ։ Ունկնդիրք իսկ որ կէս ժամէ ի՛նչ որ ուշադիր էին այն ողբատուր դիպած, ինչպէս թէ խոր թմբուցէն սթափած՝ ելան, ցնցուեցան ու իւրաքանչիւր որ ցրուելով ոմն գիրքը առաւ դբադելու, ոմն ալ ծխախոտը վառեց ու ինքզինքը խորհրդածութեանց տուաւ, իսկ եւս աչքս ընդարձակ ծովուն տալով՝ մտքէս այն ցաւալի դէպքերը կը յիշի զիջէի։ Փոքր երկիւլ մը սիրտս կը գրաւէր. մենք ալ այն բարբարոս երկիրներուն մօտ էինք. ու եթէ բողբոջ գնձը ալ նոյնպէս հարուածէր, անշուշտ լաւագոյն վիճակի չէինք կրնար յուսալ։ Արդէն իսկ հողմը զօրացեր էր ու ծովը քիչ մը անստիպ կը յուզէր. նաւուն տանուուն ալ սաստիկացած ըլլալով՝ ճանապարհորդաց զիւրազգածք կամ՝ անհետացի էին խորշերը քաշուելով, և կամ տըլս-

րազին կերպարանօր թիկնաթոռաց վրայ
կործանած լուի կը մուսլին: Թեթե գլխա-
ցաւութիւնէ մը ես իսկ ըմբռնեալ, կ'ըզ-
գայի որ ծովային ազգեցեալիսն անտարբ
հետեանքը կրելու էի: Դժուր բռնելը ա-
նանկ գէշ բուն մըն է և տնանկ անտանելի
նեղութիւն կը պատճառէ, որ ով որ չէ
փորձած կարելի չէ գողափար առնու:
Կ'երևի թէ տկարութեան բուն աթոռը
գլխուն մէջն է. կրողին աչքերը կը մթն-
նան, ու տեսարանը մուշ կերպարանք
մը կ'առնու. գլխայ պտույտը սրտի խառ-
նուքն ալ կը բերէ, որ հետզհետէ սաստկա-
նալով հարկ է որ մարդ ստամբսը ինչ
ունի դուրս տայ: Այն առեւն ամենայն ինչ
գանելի կու գայ, ևս տառաւել կերակրոյ
հօտը: Ախորժակն բոլորովին կը գոցուի,
ու մարմնոյն վրայ սաստիկ տկարութիւն
մը կու գայ: Յորչափ նաւուն շարժմունքը

կը տեէ՛ այն տկարութիւնն ալ կը շարու-
նակէ՛ մերթ ընդ մերթ անտանելի փոխու-
ղակտն նեղութիւններ տալով: Եւ այս նե-
ղութիւնք այնպէս կը սաստկանան՝ որ տը-
կար կազմուածքի մարդոց կրնան մինչև
մահ պատճառել: Իմ այս տաքնազու երեք
օր տեւեց՝ նոյնչափ առեւն գիս անտուգ
բռնելով: Որչափ ալ ջանացած են այս տը-
կարութեան դեղ հնարել՝ ունայն կուած է.
դեղ չկայ՝ մի միայն զարման կամ թեթեւ-
թիւն նեղութեան որ մարդ միւնայ գտնալ՝
խորշը քաշուիլ ու կռնկի վրայ պառկելն
է: Այն նեղութեան վայրկեանները ոչ եր-
բէք կ'անցնին. ժամերը անլմնաւի են, իսկ
օրը յաւիտենականութիւն: Բարեբաղդա-
բար շոգեմզին անընդհատ ուժը զմեզ շա-
բունակ կը մզէ ու մնը օր աւուր գէպ ՚ի
Պոմպէյ կը մերձենանք:

կը շարունակուի.

Հ. Յ. Վ. ԻՍԱԿԵՐՏԵՆԵՑ:

« ԵՕԹՆ ՀՈԳԻ ԵՄՔ »

Երէկ ինձ դիպաւ աղջկիկ մի սիրուն,
Որ յիւր ըզգեստուց խնդճ ու պատառուն,
Աջքատ գեղլուկ մ'ինձ թուեցաւ .

Ութ տարեկան էր, ինքն ըսաւ:

Անոյշ 'ի տես, աչք գեղեցիկ կապուտակ,
Ժըպիտն անմեղ. եւ իբր յոսկեայ շրջանակ
Խիտ խիտ իւր մաշկերն
Կապէին գերեան:

« Ընդ եղբայր և ընդ քուրիկ քանի՛ էք դուք » հարցուցի .
Նա կեցաւ զարմանալով ինձ նայելու, և յետոյ

Պատասխանեց. — « Քանի. եօթն եմք » . —

« Ըսէ ինձ, ո՛ր կը բնակիք » : — Եւ փոքրիկն .

« Եօթն եմք. երկուքն 'ի մօտ քաղաքս գնացին

Աշխատելու, և միւս երկուք ծովու վրայ .

Եւ երկուք այլ՝ մէկըն քուրիկ միւսն եղբայր

Գերեզմանոցն արդ կու հանդիւն .

Եւ մենք միակ, մայրիկս ու ես յայն հիւղին

Մօտիկ իրենց քով կ'ապրինք » : —

« Եօթն ըսիր. տեսնեմք. երկուքն 'ի ծովու,

Միւս այլ երկուք 'ի քաղաք, դու . . .

Ուրեմն . . . հիմայ նորէն դարձիր գումարելու,

Եւ կը տեսնաս սրխալ հաշիւդ » : —

« Բայց այո՛. ամենք մէկտեղ » — կրկնեց դարձեալ —

« Եօթն եմք ըստոյդ հաւաստեալ . . .

« Եւ միւս երկուքն 'ի գերեզման ուր կան 'ի քուն » : —

« Դու կը խօսիս, վազես, կ'ապրիս, ձագունկ սիրուն,